

DOI: <https://doi.org/10.46991/FLHE.2024.28.2.118>

Նարե Շալունց*

<https://orcid.org/0000-0003-3606-261X>

Երևանի պետական համալսարան

ԱՌԱՏԻ ՈՒ ԱՍԱԳՎԱԾՔԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԽՆԴԻՐԸ ԱՐԴԻ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՑՈՒՅՑՈՒՄ

Հոդվածում փորձ է արվում ներկայացնել առաժի և ասացվածքի՝ որպես լեզվական միավորների վերաբերյալ մի շարք գիտնականների առաջադրած մոտեցումներն ու տեսությունները: Երկու միավորների տարբերակման հարցում շեշտադրվում է փոխաբերության դերը: Փոխաբերությունը՝ որպես առաժի բնութագրիչ, ճանաչողության միջոցով առաջ է բերում ընդհանրական նշանակություն: Առաժներն ու ասացվածքները հարաժամանակային դրսևորումներ են՝ անցյալի փորձի ցուցիչ, ներկա համատեքստի բնորոշում և ապագայի արտահայտություն: Վերոնշյալ լեզվական միավորները դիտարկվում են որպես համընդհանուրի, ազգայինի և անհատականի համադրություն, քանի որ արտահայտում են համընդհանուր ճշմարտություն ու լեզվամշակութային ինքնություն: Արդի լեզվաբանության դիտանկյունից առաժներն ու ասացվածքներն ուսումնասիրվում են ասույթի մակարդակում՝ նկատի առնելով դիսկուրսի վերլուծության դաշտը:

Բանալի բառեր. առաժ, ասացվածք, առաժաբանություն, համընդհանուր ճշմարտություն, փոխաբերություն, ասույթ

Ներածություն

Արդի լեզվաբանական գիտակարգի հարացույցում կարևոր տեղ է զբաղեցնում առաժների և ասացվածքների ուսումնասիրությունը: Առաժների ու ասացվածքների՝ որպես լեզվական միավորների բնորոշումն ու առանձնահատկությունների վերհանումը մի շարք գիտական հետազոտությունների առարկա են: Առաժներն ու ասացվածքները լեզվամշակույ-

* nare.shalunts@ysu.am



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Received: 28/10/2024

Revised: 26/11/2024

Accepted: 16/12/2024

© The Author(s) 2024

թի յուրօրինակ առանձնահատկությունների ցուցիչ են և ներամփոփում են մշակութային տարրեր: Հիրավի, առածը լեզվական ու մշակութային համակարգի համադրման ակնհայտ օրինակ է՝ երկու հայեցակերպերի հատման կետ: Հարկ է ընդգծել, որ այս լեզվական միավորների հիմքում պատկերավոր ու վերացական մտածողությունն է: Առածի՝ որպես լեզվական միավորի շուրջ հետաքրքրությունը նպաստել է լեզվաբանության առանձին գիտակարգի՝ *առածաբանության* ձևավորմանը, որի հետազոտության առանցքն առածն է: Առածի վերաբերյալ տեսական աշխատությունները վերհանում են դրա սահմանման, իմաստակառուցվածքային, ձևաբանական, շարահյուսական, ոճական և գործաբանական բնորոշումների բնույթը: Ակնհայտ է, որ առածները լեզվական հանրույթի լեզվամտածողության և լեզվաճանաչողության յուրովի արտահայտություն են, ինչն էլ թույլ է տալիս փաստական նյութն ուսումնասիրել լեզու-մշակույթ-մտածողություն-ճանաչողություն համատեքստում:

Առածներն ու ասացվածքները որպես լեզվական միավորներ. փոխաբերականությունը որպես առածի տարբերակիչ գիծ

Առածաբանական գիտակարգի շրջանակում տերմինաբանության տեսանկյունից հասկացությունների տարբորոշումն այնքան էլ հստակ չէ: Ֆրանսերեն գիտական գրականությունում գործածվում է « *parémie* » եզրույթը, որն ընդհանրական առումով ներառում է *proverbe, dicton, adage, aphorisme, maxime, sentence* և նման այլ հասկացություններ: Այս լեզվական միավորների տարբերակիչ գծերի սահմանային անցումը բավական խրթին է, եթե նկատենք, որ բառարանային աղբյուրներում դրանք դիտարկվում են որպես հոմանիշներ և հաճախ ունեն նույնատիպ բացատրություններ: Այնուամենայնիվ, գիտական ասպարեզում որոշակի փորձեր են արվել՝ դասակարգելու վերոնշյալ լեզվական միավորները: Առածաբանական գիտական գրականության մեջ առանձնանում են իսպանացի հայտնի առածաբան Խ. Ս. Մունյոսի աշխատությունները, որտեղ նա առանձնացնում է երեք խումբ՝ ըստ գործածության նպատակի.

1. Ժողովրդական (*proverbes, dictons, phrases proverbiales, maximes, principes, sentences, wellérismes*),
2. գիտական (*aphorisme, axiome, adage juridique, sentence philosophique*),
3. գովազդային (*slogan*) (Muñoz, 2000, էջ 101):

Ֆրանսերեն անցանց *Le Robert* և *Larousse* բառարաններում «*proverbe*» (առած) եզրույթի սահմանումները համեմատելիս կարելի է նկատել այն

ընդհանրությունը, որ առածն արտահայտում է փորձի վրա հիմնված ճշմարտություն և ժողովրդական իմաստություն (Dictionnaire Le Robert; Dictionnaire Larousse):

Առածի (proverbe) և սասցվածքի (dicton) տարբերակման վերաբերյալ գիտական գրականության մեջ հիմնական տարբերակիչ գիծ է փոխաբերականությունը (Greimas, 1960; Zouogbo, 2008, էջ 312; Nazarian, 1994): Սասցվածքը չի ենթադրում փոխաբերական բնույթ. այն արտահայտում է ուղիղ իմաստ, որն ընկալելի է բաղադրիչների իմաստից, մինչդեռ առածը տարատեսակ հասկացությունների միջոցով ստեղծում է մտազուգորդային կապ, ներամփոփում ուղիղ իմաստից փոխաբերականի անցումը: Այս ճանաչողական գործընթացի առանցքը համեմատությունն է հիմնված նմանության վրա: Այս տեսությունը նշանագիտական դիտանկյունից լայն իմաստով ձևի և բովանդակության հարաբերակցության մասին է: Առածի բաղադրիչները՝ որպես նշաններ, արտահայտում են կոնկրետ իրավիճակ կամ երևույթ բնորոշող իմաստ, սակայն գլխավոր գործոնի՝ փոխաբերականության շնորհիվ առածը՝ որպես ամբողջական նշանային համակարգ, իմաստային տեսանկյունից վերագրվում է մեկ այլ երևույթի կամ իրավիճակի: Բաղադրիչ տարրերը, կորցնելով ինքնուրույն իմաստը, կազմում են նոր լեզվական միավոր, հետևաբար՝ նոր իմաստ: Այս առնչությամբ տեղին է հիշատակել դարձվածային միավորի իմաստային դաշտի ձևավորման գործում մաս-ամբողջ հարաբերակցության վերաբերյալ շվեյցարացի անվանի լեզվաբան Շ. Բալլիի մտտեցումը: Դարձվածային միավորների կազմության էությունը քննելիս հեղինակը նշում է, որ միավորի իմաստը պայմանավորված չէ առանձին բաղադրիչների իմաստներով: Այս երևույթը նման է քիմիական ռեակցիայի, որի արդյունքում տարրերը համակցվելով ձևավորում են նոր նյութ (Bally, 1921, էջ 74-75):

Ռ. Հոնեքն առանձնացնում է առածի քննության յոթ դիտանկյուն՝ սուբյեկտիվ, ձևական, կրոնական, գրական, գործնական, մշակութային, ճանաչողական: Եթե սուբյեկտիվ դիտանկյունը հիմնված է խոսողի անձնական փորձի վրա, ապա ձևական տեսանկյունից առածը դիտարկվում է իբրև լեզվանշանագիտական հետազոտության առարկա: Առածների վերլուծությունն իրականացվում է ինչպես կրոնական, այնպես էլ տարբեր գեղարվեստական ստեղծագործություններում: Կարևոր է նաև դրանց գործածությունը զանազան կիրառական ոլորտներում՝ գովազդ, հոգեթերապիա: Ինչ վերաբերում է մշակութային և ճանաչողական հայեցակերպերին, ապա մի կողմից առածի գործածումն ու մեկնությունը դիտարկվում է սոցիալ-մշակութային համա-

տեքստի շրջանակում, մյուս կողմից՝ հոգեկան գործընթացների սահմաններում (Honeck, 1997, էջ 5):

| Հայեցակերպ | Հիմնական նպատակ | Հիմնական ենթադրություն | Գիտակարգեր | Հիմնական մեթոդներ |
|-------------|--|--|--|---|
| Ճանաչողական | Բացատրել առաձի ճանաչողական հայեցակերպը | Ճանաչողական կաղապարներ | Հոգեբանություն, լեզվաբանություն | Փորձարարական |
| Մշակութային | Նկարագրել առաձի մշակութային գործառույթները | Մշակութային ծանոթ ձև | Մշակութային մարդաբանություն, ազգագրություն | Ազգագրական, դաշտային ուսումնասիրություն |
| Ձևական | Սահմանել և դասակարգել առաձը | Լեզվական ձև | Լեզվաբանություն, նշանագիտություն | Լեզվական վերլուծություն |
| Գրական | Նկարագրել առաձների գործածումը արձակում և պոեզիայում | Յուրօրինակ բանաստեղծական առանձնահատկություններ | Գրականագիտություն | Գրական վերլուծություն |
| Սուբյեկտիվ | Առաձի սուբյեկտիվ ընկալում | Սուբյեկտիվ կողմի կարևորում | – | Ֆենոմենոլոգիա |
| Գործնական | Դիտարկել առաձի կիրառման ձևերը | Կիրառություն | Զանազան գիտակարգեր | Տարբեր մեթոդներ |
| Կրոնական | Նկարագրել և մեկնաբանել առաձի կիրառումը կրոնական տեքստերում | Բարոյախրատական բնույթ | Կրոնագիտություն | Պատմական և տեքստային վերլուծություն |

Աղյուսակ 1. Առաձի ուսումնասիրման յոթ հայեցակերպերի ամփոփ նկարագիրը (Honeck, 1997, էջ 42)

Ձ. Կլեյբերն ընդգծում է առածի՝ առավել ընդհանրական գաղափար արտահայտելու բնույթը, որին հակադրվում է ասացվածքի՝ որպես տարատեսակի փաստը: Այլ կերպ ասած՝ առած-ասացվածք փոխարարերության հարցը ընդհանուր-մասնավոր հարաբերակցության մասին է (Kleiber, 2017, էջ 43):

Կլեյբերը փաստում է՝ *«ինչպես անհնար է հաշվելի գոյականի միայն հաշվելիության հատկանիշի վրա հիմնվելով պնդել, որ հաշվելիության հատկանիշի առկայության դեպքում միայն գործ ունենք գոյականի հետ, այնպես էլ փոխարերական առածների առանձնահատկությունը՝ փոխարերականությունը, չի կարելի դիտարկել որպես առածի գոյության միակ պայման»* (Kleiber, 2017, էջ 37): Ուստի, ընդամենը մեկ առանձնահատկության հիշատակումը բավարար չէ՝ պատկերացում կազմելու որևէ հասկացության մասին: Տարբեր բնութագրիչ գծերի համակցումն է, որ կազմում է հասկացության ամբողջական պատկերը: *Հիրավի, առածի ամբողջությունն ավելին է, քան պարզապես մաս-բնութագրիչների հանրագումար:*

Առածի «իմաստային ինքնության» սահմանումը

Ամբողջացնելով առածի տեսությունը՝ Կլեյբերը տարբերակում է «իմաստային ինքնության» հինգ չափանիշ, որոնք ձևավորում են առածի «իմաստային անձնագիրը»: Հարկ ենք համարում համառոտ ակնարկի տեսքով ներկայացնել այդ չափանիշները:

1. Առածի սահմանումների առանցքում անառարկելի փաստ է *համընդհանուր ճշմարտություն արտահայտելու* վերաբերյալ պնդումը: Այլ կերպ ասած՝ այն վերաբերում է ոչ թե դիպվածային կոնկրետ իրավիճակի, այլ ընդհանրացնում է իրական, հավանական ու պայմանական դեպքերի հանրագումարը: Եթե նկատի առնենք ժամանակային գործոնի դերը, ապա այն հատում է անցյալ-ներկա-ապառնի սահմանափակումների շղթան՝ անցնելով պայմանականի սահմանից անդին:

2. Գարևոր է ընդգծել նաև *ինքնուրույն լեզվական միավոր* համարվելու չափանիշը, ընդ որում՝ ինքնուրույնությունն արտահայտվում է ն՝ շարահյուսական, ն՝ իմաստային մակարդակներում: Իմաստային տեսանկյունից առածը պահպանում է համատեքստային ու հարատեքստային անկախությունը. անկախ նախորդող ու հաջորդող լեզվական, ինչպես նաև արտալեզվական իրականությունից՝ այն ամբողջական իմաստակիր միավոր է: Գործաբանական տեսանկյունից այն որոշակիորեն կախված է այն տեքստից, որում ներմուծվում է՝ կատարելով «խոսույթային երաշխավորի» դերը:

3. Առածները *սահմանափակ թվով համատեքստեր բնորոշող ընդհանրական նախադասություններ են*: Հենց այս հատկանիշն է տարբերակիչ դեր խաղում առածի և սովորական նախադասության միջև: Եթե ընդհանրական նախադասությունն անմիջականորեն վերաբերում է իր կազմում առկա բաղադրիչներին, ապա առածի դեպքում բաղադրիչ միավորները վերացարկման միջոցով ընդգծում են դրանց այս կամ այն հատկանիշը որոշակի համատեքստում:

4. Առածը *կայուն արտահայտություն* է, որն առկայացնում է արդեն գոյություն ունեցող, անառարկելի փաստ:

5. Առածի բնութագրման կարևոր հատկանիշ է *լայն իմաստային դաշտի առկայությունը*, տարբեր իրավիճակներում «ճկունությունը», ընդ որում՝ իրավիճակային համատեքստերը չեն կարող ընդգրկվել ու դիտարկվել միայն մեկ ընդհանրական պատկերացման շրջանակում: Այս առանձնահատկության շնորհիվ էլ առածը տարբերվում է ասացվածքից, որն արտահայտում է միանման պատկերների ամբողջություն (Kleiber, 2019, էջ 14-21):

Տարբեր բառարանային աղբյուրներում առածային տարբերակների առկայությունը որոշակիորեն հակասում է առածների իբրև լեզվի կայուն արտահայտություն համարվելու մոտեցմանը: Օրինակ՝ «*À chaque oiseau son nid est beau*» առածը տարբեր դրսևորումներ ունի մի շարք աղբյուրներում: Մասնավորապես՝ առածի կազմում բաղադրիչների (*chaque-tout, être-paraître-trouver*) տարբերակները որոշակի իմաստային նրբերանգներ են հաղորդում ասույթին: Այնուամենայնիվ, անկախ բաղադրիչների փոփոխական դրսևորումներից՝ առածի ընդհանրական գաղափարն ընկալելի է բոլոր տարբերակներում:

| Առած | Աղբյուր |
|--|---|
| <i>À chaque oiseau son nid est beau</i> | <i>Dournon (1993, էջ 243)</i> <i>Combet, Muñoz (1995, էջ 66)</i> |
| <i>À tout oiseau, son nid paraît beau</i> | <i>Combet, Muñoz (1995, էջ 66)</i> |
| <i>Chaque oiseau trouve son nid beau</i> | <i>Combet, Muñoz (1995, էջ 66)</i> |
| <i>À chaque oiseau son nid paraît beau</i> | <i>Refranero Multilingüe</i> |
| <i>À tout oiseau son nid est beau</i> | <i>Refranero Multilingüe</i> |

Աղյուսակ 2. Առածային տարբերակների դրսևորումներ

Որպես ասույթ առաձն արտաբերելը ենթադրում է համատեքստերի մի ողջ շղթա. նույնիսկ եթե այն հիշատակվում է կոնկրետ համատեքստում, միևնույն է, ներառում է դիպվածների ողջ հանրագումարը: Հենց այս ընդհանրականությունն է թույլ տալիս գործածել առածը բազմաթիվ ու բազմազան հաղորդակցական իրավիճակներում: Տվյալ դեպքում կարելի է պնդել, որ առածը բնորոշվում է *ներքին համատեքստերի առկայությամբ*. առածի ընկալման գործում կարևոր է ոչ միայն արտալեզվական համատեքստի դիտարկումը, որը որոշակի երանգ է հաղորդում իմաստին, այլև առածի հենց ներքին համատեքստը, որն ինքնին արտացոլում է ներքին իմաստային դաշտի պատկերը:

Ռուս առածաբան Գ. Պերմյակովը կառուցվածքային առածաբանության շրջանակում առածների ու ասացվածքների բնույթը քննելիս դրանք դիտարկում է երեք հարթությունում: Նախ՝ առածներն ու ասացվածքները լեզվական նշաններ են. տվյալ դեպքում ընդգծվում է լեզվական բաղադրիչի կարևորությունը: Այնուհետև՝ առածներն ու ասացվածքները տրամաբանության միավորներ են, որոնք ենթադրում են դատողություն: Իբրև գեղարվեստական մանրանկար՝ առածներն ու ասացվածքները տեքստեր են, որոնք ունեն պատկերավոր բնույթ (Пермяков 1988, էջ14): Հատկանշական է, որ վերոնշյալ դրույթները փոխկապակցված են, եթե նկատի առնենք, որ *առած-ասացվածքը մտածողության լեզվական դրսևորում է տեքստի միջոցով*:

Առածների դասակարգման պերմյակովյան տեսության ելակետը *հակադիր էությունների անփոփոխակ գույգի* գաղափարն է, որը ենթադրում է տրամաբանական կողմի շեշտադրում: Հակադիր գույգը որպես առածի ձևավորման հիմք, ներառում է մեծ-փոքր, մոտ-հեռու, լավ-վատ, ծեր-երիտասարդ, գեղեցիկ-տգեղ, յուրային-օտար, բարեկամ-թշնամի և մի շարք այլ հակադիր գաղափարներ: Հարկ է ընդգծել, որ միևնույն տրամաբանական ձևի հիման վրա ստեղծված առածները կարող են դրսևորել իմաստային տարբեր շերտեր՝ ընդգծելով այս կամ այն բովանդակային կողմը (Пермяков 1988:107):

Դիտարկենք հետևյալ օրինակները.

(1) *Qui va doucement, va sûrement*
Կամաց գնացողը շատ կզնա

(2) *Qui conduit dans le fossé, y tombe le premier*
Փոս փորողը փոսը կընկնի

Համեմատական մեթոդի կիրառման միջոցով պարզ է դառնում, որ վերոնշյալ առաձների տրամաբանական ձևն ընդհանուր է՝ առաձի երկրորդ մասում արտահայտված գործողության կատարումը բխում է առաջին հատվածի գործողության իրականացումից: Սակայն, եթե (1) առաձներում ընդգծվում է *aller doucement – aller sûrement* գործողությունների հաջորդական շղթան, որը ենթադրում է համբերել–հաջողել գաղափարը, ապա (2) առաձներում *conduire dans le fossé – y tomber le premier* շղթան ունի բացասական հարանշանակություն, որն առկայանում է «բումերանգի» գաղափարի միջոցով:

Առաձներում հակադիր գույգերը կարող են ստանալ զանազան դրսևորումներ: Մասնավորապես փաստական լեզվանյութի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հակադիր գույգը տարբեր լեզվամշակույթներում կարող է արտահայտվել զանազան բաղադրիչների միջոցով՝ այդպիսով արտացոլելով ազգամշակութային յուրահատկություններ: Ավելին՝ հակադրությունը կարող է արտահայտվել ինչպես արտակա, այնպես էլ ներակա կերպով, երբ հակադիր կողմերից մեկը բացակայում է, սակայն իմաստի դիտանկյունից բովանդակային կողմն ամբողջանում է մյուս կողմի վերհանման արդյունքում:

(1) *Mieux vaut un sage ennemi qu'un sot ami*

Լավ է խելացի թշնամին, քան անխելք բարեկամը

Լավ է գիտունին գերի, քան անգետին սիրելի

(2) *On n'est jamais trahi que par les siens*

Մարդի աչքը խորունկ փորողը իր բարեկամն է

(1) առաձներում *sage-sot, ennemi-ami* (խելացի–անխելք/գիտուն–անգետ, թշնամի–բարեկամ) հակադրության լեզվական առկայացումն ուղիղ է՝ նկատի առնելով արտակա շերտը, մինչդեռ (2) առաձներում ն՝ ֆրանսիական, ն՝ հայկական լեզվամշակույթում հակադիր գույգի (բարեկամ–թշնամի) միայն մեկ բաղադրիչն է արտացոլված ձևի մակարդակում՝ *sien*, բարեկամ: Վերոնշյալ առաձների մյուս բաղադրիչների (*trahir*, աչք փորել) արտահայտած հարանշանակային իմաստի միջոցով «վերականգնվում է» հակադիր գույգը, ինչն էլ թույլ է տալիս բովանդակային պլանում ամբողջացնել առաձի իմաստը:

Իսպանագիտական աղբյուրներում առաձային ասույթները դասակարգվում են ըստ ձևի և բովանդակության: Մասնավորապես առանձնացվում է երեք կարգ՝ *refrán* և *proverbio* (ֆր.՝ *proverbe*, հայ.՝ առաձ), *refranes meteorológicos, laborales, supersticiosos* (ֆր.՝ *dicton*, հայ.՝ ասաց-

վածք) և frase proverbial (ֆր.՝ phrase proverbiale, հայ.՝ առածային ասույթ) (Muñoz 2000, էջ 101-103): Առածի բնութագրիչ հատկանիշներն են ընդհանրական թեմատիկան, հատկաբանական իմաստը, հիմնականում երկբաղադրիչ կառուցվածքը, հուշամարզական տարրերը, համընդհանուր ընդգրկումը, երբեմն հնաբան ձևաբանական-շարահյուսական նկարագիրը (օր.՝ *À bon entendeur, demi-mot; Bouche de miel, cœur de fiel; Goutte à goutte l'eau creuse la pierre; Nourris un corbeau, il te crèvera les yeux; Qui trop se hâte reste en chemin*): Ինչ վերաբերում է ասացվածքին, այն բնութագրվում է հատուկ թեմատիկայով, ունի սահմանափակ կիրառություն, քանի որ թեմատիկ դաշտը հիմնականում ընդգրկում է օդերևութաբանությունը, աշխատանքը և սնահավատությունը (օր.՝ *Quand le chat se passe la patte sur la tête, bientôt il y aura tempête; Après la pluie, le beau temps*): Հարկ է ընդգծել, որ տեխնոլոգիական զարգացման արդյունքում գյուղատնտեսական աշխատանքներին վերաբերող մի շարք ասացվածքներ դուրս են եկել գործածությունից, իսկ որոշներն էլ իմաստի ընդլայնման շնորհիվ լայն կիրառություն են ստացել: Առածային ասույթն էլ տարբերություն առածի, զուրկ է հուշամարզական բնութագրից, այն է՝ ձևի ու կառուցվածքի առումով ավելի դժվար է մտապահել: Վերջինս արտահայտում է հրահանգ կամ արգելք (օր.՝ *Il faut battre le fer pendant qu'il est chaud; Il ne faut pas mettre son doigt entre le marteau et l'enclume; La patience vient à bout de tout; Il faut tailler son manteau selon son drap*):

Առածների ու առածային ասույթների տարբերակումից զատ՝ առկա են նաև տվյալ երկու հասկացությունների ներքին դասակարգումներ: Նկատի առնելով բառային մակարդակում բաղադրիչ միավորների իմաստային դաշտը՝ առանձնացվել են սեռանիշ (hyperonyme) և տեսականիշ (hyponyme) առածներ և առածային ասույթներ (Muñoz, 2000, էջ 105): Եթե բառիմաստային հարաբերության շրջանակում սեռանիշ հասկացությունն ընդհանուր անունն է, որի բաղադրիչները վերացական հասկացություններ արտահայտող բառային միավորներ են, ապա տեսականիշ հասկացությունը՝ իբրև մասնավոր անուն, ներառում է կոնկրետ, բուն առարկայական բառակազմ:

Դիտարկենք հետևյալ օրինակները:

Les apparences sont trompeuses
Bouche de miel, cœur de fiel
Joli dessus, vilaine doublure

Արտաքինը խաբուսիկ է

*Լեզուն մեղր, սիրտը լեղի
Պուրսը քահանա, ներսը սասանա*

Վերոնշյալ առածներն ու առածային ասույթները բնութագրում են մարդու արտաքինի ու ներքինի անհամապատասխանությունը ֆրանսիական ու հայկական լեզվամշակույթներում: Իմաստային տեսանկյունից սեռանիշ առածային ասույթը (*Les apparences sont trompeuses; Արտաքինը խաբուսիկ է*) երկու լեզվամշակույթների միջև ընդհանուրի դրսևորումն է, իսկ ինչ վերաբերում է տեսականիշ ասույթներին, ապա դրանք արտահայտում են յուրաքանչյուր լեզվամշակույթի առանձնահատկությունները: Մասնավորապես՝ բառային մակարդակում ֆրանսերենում մարդու արտաքին-ներքին հակասությունն առկայանում է *bouche-cœur, miel-fiel, dessus-doublure, joli-vilain*, իսկ հայերենում *լեզու-սիրտ, մեղր-լեղի, դուրս-ներս, քահանա-սասանա* հակադրությունների օգնությամբ:

*L'excès en tout est un défaut
Il faut tailler son manteau selon son drap
Gouverne ta bouche selon ta bourse
Il faut mesurer son vol à ses ailes*

*Ամեն բան իր չափն ունի
Ոտներդ վերմակիդ չափով մեկնիր
Ոտքդ կարպետովդ մին արա
Շատ մի՛ սիրի, ատել կա, շատ մի՛ ատի, սիրել կա*

Վերոնշյալ առածներում զսպվածությունն ու չափավորությունը բնութագրող սեռանիշ ասույթները (*L'excès en tout est un défaut, Ամեն բան իր չափն ունի*) իմաստի ընդգրկման դիտանկյունից ներառում են մասնավոր դիպվածային կարգերը: Ֆրանսերենում մասնավորն արտահայտվում է *manteau-drap, bouche-bourse, vol-ailes* գոյականների, իսկ հայերենում՝ *ոտք-վերմակ, ոտք-կարպետ, սիրել-ատել* լեզվական միավորների հարաբերակցության միջոցով:

Եթե դիտարկենք առածը տարածամանակային և համաժամանակային դիտանկյուններից՝ հաշվի առնելով ժամանակի գործոնը, ապա կարելի է նշել հարաժամանակայնությունը որպես բնութագրիչ տարր: Եթե անցյալի համատեքստում այն հանդես է գալիս իբրև արդյունք, ապա ապագայի դեպքում՝ որպես հնարավոր գործողություն:

Առածի ժամանակային հայեցակերպն անցյալի պլանում կուտակված փորձի և իմաստության հանրագումարն է, իսկ ապագայի մակարդակում

այն խոսակցի վրա ազդեցություն թողնելու ներուժն է, ինչը որոշակիորեն առնչվում է լեզվագործաբանական մոտեցմանը:

Ժամանակային գործոնի դիտանկյունից առածը «հավաքական հիշողության» (Ballard, 2009, էջ 41) դրսևորում է: Այն լեզվական հանրույթի լեզվամշակութային գծերի, արժեհամակարգի տարրերի և ազգային իմաստության խտացում է: Այս համատեքստում առածի գործառույթները կարելի է դիտարկել երեք մակարդակում՝ հավաքական հիշողության ձևավորում, պահպանում և փոխանցում: Ուստի, հարաժամանակային հայեցակերպի շրջանակում առածի բնորոշումն իրապես փաստարկված է, եթե նկատի առնենք այն հանգամանքը, որ վերոնշյալ միավորներն արտահայտում են ժամանակի սահմաններից դուրս համընդհանուր գաղափարներ, որոնք, անշուշտ, ուրվագծվում են կոնկրետ լեզվամշակութային ու հանրամշակութային համատեքստում:

Առածներն ընդգրկում են մարդու գործունեության բոլոր ոլորտներն ու բնագավառները՝ «անկախ ժամանակից ու տարածությունից» (Muñoz, 2000, էջ 102) և ընդհանրական իմաստով հարում են մարդուն և մարդկայինին (Kleiber, 2000, էջ 45; Lakoff & Turner 1989, էջ 166): Ինչ վերաբերում ասացվածքին, այն «ուղղակիորեն առնչվում է բնական երևույթներին և անուղղակիորեն՝ մարդկանց» (Kleiber, 2000, էջ 46): Ճանաչողական մեխանիզմների օգնությամբ ասույթը վերագրվում է մարդուն: Առածը դիտարկվում է նշանագիտական համատեքստում որպես արտալեզվական իրողության լեզվական առկայացում:

Առածի՝ մարդուն բնութագրելու հայեցակերպը լուսաբանելու համար Կլեյբերը դիտարկում է հետևյալ օրինակները (Kleiber, 2000, էջ 47-48):

Chien qui aboie ne mord pas.

Tel père, tel fils.

Առաջին օրինակը փոխաբերաբար է առնչվում մարդուն՝ ուղղակիորեն արտահայտելով ոչ մարդկային հատկանիշ: Երկրորդը ուղիղ իմաստով վերաբերում է մարդուն, սակայն կարող է գործածվել երևույթների և իրերի բնութագրման նպատակով: Այս հակասությունը որոշակի հստակություն է առաջ բերում փոխաբերության սահմանների որոշարկման հարցում: Այսպիսով՝ եթե երկրորդ առածը և՛ ուղիղ, և՛ փոխաբերական իմաստով գործածվելու դեպքում պահպանում է առածի էությունը, ապա առաջինի դեպքում միայն փոխաբերական ընթերցումն է ապահովում առածային իմաստը:

Քննելով առածի՝ այլ նման կարգերից տարբերակումը՝ հանգավորման և բաղաձայնայնության առկայությանը զուգահեռ կարևորվում է ուղիղ և


փոխաբերական իմաստների գործոնը. որոշ առաձևեր գործածվում են և՛ ուղիղ, և՛ փոխաբերական իմաստներով՝ հաճախ արտահայտելով դրանցից մեկը (Schapira, 1999, էջ 56; Tamba, 2000, էջ 41):

Առաձի կարևորագույն բնութագրիչներից մեկը համընդհանուր ճշմարտություն արտահայտելն է: Ժողովրդական իմաստությունն ամփոփված է համընդհանուրում: Եթե ուսումնասիրենք առաձն անհատականի և համընդհանուրի փոխառնչության հայեցակերպում, ապա կարելի է պնդել, որ ելակետն անհատականն է: Այնուամենայնիվ, առաձը ներառում է համընդհանուրը, քանի որ հիմնված է փորձի վրա: Առաձները դիտարկվում են որպես և՛ համընդհանուրի, և՛ ազգայինի ցուցիչ: Համընդհանուրն առաձներում պայմանավորված է մի շարք հանգամանքներով, որոնք էական ազդեցություն են թողնում առաձի վերոնշյալ հատկանիշի ձևավորման վրա: Մասնավորապես՝ պատմական իրողություններն ու աստվածաշնչյան, դիցաբանական պատումները հիմք են վերհանելու մի շարք առաձների՝ գրեթե բոլոր ժողովուրդներին հատուկ՝ համընդհանուր լինելու առանձնահատկությունը: Համընդհանուրի դիտանկյունից առաձներն առնչվում են մարդուն՝ արտահայտելով մարդկայինը բնորոշող հասկացություններ ու երևույթներ: Միննույն ժամանակ, առաձները ներառում են ազգային գունապնակի տարրեր՝ այդպիսով հանդես գալով իբրև համադրային միավորներ:

Առաձներում համընդհանուրի դրսևորման վառ օրինակ են նաև պատճենումներն ու փոխառությունները՝ որպես լեզվամշակույթների միջև փոխազդեցության արդյունք: Հարկ է նշել, որ առաձներին բնորոշ է ընդհանուր հասկացական շերտը. այնուամենայնիվ, յուրաքանչյուր լեզվում դրանք առկայանում են ազգայինի պրիզմայով: Հենց այս հանգամանքն էլ նպաստեց գիտական հարացույցում առաձների ուսումնասիրման մարդակենտրոն և էթնոկենտրոն հայեցակերպերի լայն տարածմանը (Baghdasarián, 2014, էջ 202-204; Baghdasarián, 2021, էջ 151): Համընդհանուրի և ազգայինի կարգերի դիտանկյունից առաձային իմաստի վերլուծության մարդակենտրոն դիտանկյունը ենթադրում է ճանաչողական գործընթացների լայն շրջանակի ուսումնասիրություն, իսկ ինչ վերաբերում է էթնոկենտրոն հայեցակերպին, ապա այն շեշտադրում է ազգային յուրահատկությունների դրսևորման հանգամանքը: Այսպիսով, համընդհանրությունը պայմանավորված է մի շարք գործոններով, որոնց թվում են լեզուների ցեղակցությունը, պատմական ու մշակութային կապերը, առաձների ծագման ընդհանուր աղբյուրը, փոխառությունները, լեզվամտածողության ընդհանրությունները: Ուստի, «լեզվի առաձային ֆոնդում ներդաշնակորեն միահյուսվում են համընդհանուրն ու ազգայինը» (Բաղդասարյան, 2023, էջ 184-185):

Իմաստային տեսանկյունից առածը դիտարկվում է երկմակարդակ հարացույցի շրջանակում, որի մի կողմում բաղադրիչների ուղիղ իմաստային հանրագումարն է, իսկ մյուսում՝ ընդհանրական պայմանական նշանակությունը: Ոչ փոխաբերական բնույթ ունեցող առածի դեպքում վերոնշյալ երկու մակարդակները համապատասխանում են միևնույն վերաբերյալին, մինչդեռ փոխաբերական առածների պարագայում համատեքստում գործածվելիս առածի իմաստը չի համընկնում բաղադրիչների՝ ուղիղ իմաստով մատնանշած վերաբերյալին:

Վերոնշյալ գործընթացը կարելի է պատկերել եռաստիճան կադապարի տեսքով: Նախ՝ առածն արտահայտում է որոշակի իմաստ, որը կարելի է անվանել առաջնային՝ հաշվի առնելով բաղադրիչ լեզվական նշանների հասկացական մակարդակը: Խոսքում գործածվելիս իմաստն ընդհանրացվում է, որից անցում է կատարվում մասնավորին՝ առաջնային, երկրորդային, երրորդային և այլ իմաստներին կոկրետ հաղորդակցական համատեքստում:



Գծապատկեր 1. Առածի իմաստային շղթայի կառուցվածքը

Առածի՝ որպես ասույթի քննության շուրջ

Արդի լեզվաբանական գրականության շրջանակում առածները դիտարկվում են իբրև ինքնուրույն լեզվական միավոր՝ ասույթ: Առածի՝ որպես ասույթի քննության հիմնական առանցքը ընդհանրական գաղափարի արտահայտումն է, որի վկայությունը կարծիք արտահայտող բայերի անհամատեղելիությունն է առածի հետ: Այս մոտեցման դեպքում կարևորվում է առածի տրամաբանական կողմը (Michaux, 1999, էջ 342): Այս ամենին զուգահեռ առածը կարող է համակցվել այնպիսի կառույցների հետ, որոնք գործածվում են ընդհանրական գաղափարի ներմուծման համար՝ *Comme on dit, comme dit la sagesse populaire* (Anscombe, 2000, էջ 10-11):

Անսկոմբրն առածը համեմատում է օրենքի, իսկ այն գործածողին՝ փաստաբանի հետ. վերջինս «օրենքի հեղինակը չէ, հեղինակն արդարադատությունն է: Մակայն, փաստաբանի պատասխանատվության տիրույթում է կոնկրետ իրավիճակում հիմնվել այս կամ այն օրենքի վրա» (Anscombe, 1994, էջ 100):

Առածի բնորոշման հարցում հարկ է հաշվի առնել ասույթի հեղինակի գործոնը: Մի շարք գիտնականներ դիտարկում են առածն իբրև ուրիշի խոսք (Greimas, 1960, էջ 56-57; Zougbo, 2008, էջ 313): Առածը մեջբերողը «լսելի է դարձնում ազգերի իմաստության ձայնը» և հավաքական, անհայտ հեղինակին՝ «ON-locuteur»-ին (Anscombe, 2000, էջ 7-11):

Ինքնըստինքյան հասկանալի է, որ տվյալ պահին առածն արտաբերողը դրա հեղինակը չէ: Հենց այս բնութագրումն է առածը սովորական ասույթից տարբերակելու հարցի առանցքը: Տվյալ դեպքում կարևորվում են ասության երկու մակարդակները: Սովորական ասույթի դեպքում հեղինակն է հաղորդողը, մինչդեռ առածը ենթադրում է երկաստիճան կաղապար, ընդ որում՝ տվյալ պահին հաղորդողը միայն երկրորդ պլանի ասության մակարդակում է դիտվում, քանի որ փոխանցում է ուրիշի խոսքը:

Ասույթից առածի անցման կարևոր միջոց են միջտեքստայնությունն ու մետատեքստայնությունը: Գիտական գրականության մեջ տարբերակում են միջտեքստայնության երկու տեսակ՝ ուժեղ և թույլ: Ուժեղ միջտեքստային կապի դեպքում առաջին տեքստի ընկալումը պայմանավորված է երկրորդի բացահայտմամբ, մինչդեռ թույլ կապի պարագայում գործ ունենք պարզապես տեքստի առկայության հետ, որը որոշակի տեղեկություն չի հաղորդում (օր.՝ etc. (և այլն) կապակցությունը ենթադրում է այլ տեքստի առկայություն, սակայն չի բացահայտում դրա բնույթն ու էությունը): Այս համատեքստում հաղորդակցական իրադրությունում որոշ առածների միայն մասն արտաբերելով խոսողը միջ-

տեքստային կապի արդյունքում ստեղծում է ամբողջական պատկեր: Մետատեքստայնությունը հիմնականում առնչվում է գրական տեքստերին, մասնավորապես՝ առակներին, որոնց բարոյախրատական ամփոփումը կարծես մեկնաբանում է առակի ողջ իմաստը: Խոսքում գործածելով այդ ամփոփումը՝ խոսողը հղում է կատարում առակին, ինչն էլ, հետագայում ընդհանրական բնույթ ստանալով, կարող է վերածվել առածի (Ansbombe, 2000, էջ 20–21):

Առածների կայուն շարահյուսությունը քննարկող հոդվածում Անսկոմբերը չի ընդունում առածի սահմանման վերաբերյալ ընդունված մի շարք մոտեցումները (ժողովրդական իմաստության ցուցիչ, փոխաբերական և ինքնաբուխ բնույթ, հնաբան կառույցների առկայություն, կայուն արտահայտություն)՝ դրանք փոխարինելով իր կողմից առաջարկված բնորոշիչ գծերով (ինքնուրույն և նվազագույն միավոր, ընդհանրական բնույթ, *comme on dit* կառույցի ներմուծում): Ինչ վերաբերում է երկբաղադրիչ կառուցվածքին և հուշամարզական բնութագրին, դրանք մասամբ են համապատասխանում իրականությանը (Ansbombe, 2017, էջ 45-46):

Տրանսիացի լեզվաբան Բ. Միշոն դիտարկում է Կլեյբերի և Անսկոմբերի առաջադրած տեսությունները, որոնք արտահայտած իմաստի տեսանկյունից առածն ուսումնասիրում են համապատասխանաբար որպես *գոյական* և որպես *նախադասություն, ասույթ* (Michaux, 1999, էջ 340-343): Ըստ հեղինակի՝ երկու գիտնականների առաջ քաշած մոտեցումներն էլ ենթադրում են գոյականի և ասույթի համադրություն, եթե նկատի առնենք նշան–վերաբերյալ–հասկացույթ–տրամաբանական ձև միասնությունը: Պարզապես Կլեյբերի դիտանկյունից առածը նախ գոյական անուն է, այնուհետև նախադասություն, իսկ Անսկոմբերի վարկածի համաձայն՝ հակառակը: Որպես գոյական անուն՝ առածի լեզվական պատկերը նշանի տեսքով կապված է արտալեզվական իրողությանը՝ վերաբերյալին: Առածը նախադասությունից անցում է կատարում գոյականի մակարդակի, որին համապատասխանում է որոշակի հասկացույթ:

Ջ. Դ'Անդրեան ուսումնասիրում է առածի հնչյունաբանական բաղադրիչները, այլ կերպ ասած՝ առածը որպես հարալեզվաբանական հետազոտման առարկա: Առածի հիմնական բնութագրիչներից մեկը հենց երկբաղադրիչ շարահյուսական կառուցվածքն է, որը դրսևորվում է նաև հանգի և ռիթմի մակարդակում: Այս առումով հիմնական բնորոշիչը գուցա հեռ կառույցների, կրկնությունների առկայությունն է (D'Andrea, 2017, էջ 71-72):

Դասական քերականության տեսանկյունից առածը ոչ կանոնավոր կառուցվածք ունեցող միավոր է՝ հաշվի առնելով երկկազմ նախադա-

սությունում գոյականի և բայի առկայությունը (Anscombe, 2000, էջ 7): Երկբաղադրիչ կառուցվածքի վերաբերյալ քննադատական մոտեցումը ենթադրում է, որ այդ հատկանիշը վերաբերում է բովանդակային պլանին՝ իմաստային կողմին, և կարող է չդրսևորվել կառուցվածքային տեսանկյունից ձևի մակարդակում (Anscombe, 2000, էջ 18):

Մի շարք գիտական տեսություններ առաջ են քաշում այն վարկածը, որ առածները հիմնված են նորմի վրա (Rodegem, 1984, էջ 124; Palma, 2007, էջ 134): Ամեն մի հասարակության մեջ գոյություն ունեն ընդունված հստակ նորմեր, որոնց շուրջ կառուցվում է առածի իմաստային շրջանակը: Նորմերն արտացոլում են համընդհանուր ճշմարտությունը, ինչը, ինչպես արդեն նշվել է, առածի կարևորագույն բնութագրիչներից է: Հատկանշական է համընդհանուր ճշմարտության՝ առածի միջոցով լեզվական դրսևորման երկու եղանակների առկայությունը: Մի կողմից՝ առածը կարող է ընդգծել նորմը (proverbs doxaux), մյուս կողմից՝ ցույց տալ նորմից շեղումը (proverbs paradoxaux): Այլ կերպ ասած՝ առածները կամ հաստատում են համընդհանուր ճշմարտությունը (1), կամ առաջ քաշում նորմին հակադիր, բացառություն համարվող դիպվածների հանրագումարը (2).

(1) *Tel arbre, tel fruit*

Պտուղը ծառից հեռու չի ընկնի

(2) *Tout ce qui brille n'est pas or*

Ամեն պսպղացող ոսկի չի

(1) առածները ֆրանսիական և հայկական լեզվամշակույթներում հաստատում են զավակի՝ ծնողին նմանության համընդհանուր ճշմարտությունը, ընդ որում՝ եթե ֆրանսերենում առածի իմաստն առկայանում է tel...tel... զուգահեռ կառույցի միջոցով, ապա հայերենում՝ ժխտական նախադասության օգնությամբ: Առածի ֆրանսերեն տարբերակում բայի բացակայությունը ներակա կերպով արտահայտում է ժամանակային սահմանի ընդլայնում, ընդհանրական ներկա համատեքստի ընդգծում, ինչը առածի բնորոշիչներից է: Ինչ վերաբերում է հայերեն առածին, ասույթի ստորոգյալը պայմանական ապառնի ժամանակաձևում արտահայտում է ժամանակային հայեցակերպի ընդհանրացում:

(2) առածները ցույց են տալիս նորմից շեղում. պսպղացող առարկան *կարող է լինել ոսկի*, սակայն *ամեն* պսպղացող ոսկի չէ: Տվյալ դեպքում առածը շեշտադրում է այն դեպքերը, որոնք առաջ են քաշում ընդունված կարծրատիպին հակասող երևույթների ամբողջությունը:

Վերոնշյալ հակասությունը դիտարկելիս պարզ է դառնում, որ առածները կարծես կասկածի տակ են դնում ճշմարտության համընդհանուր

լինելը՝ առաջադրելով լրացուցիչ ճշմարտություն և վերաձևակերպելով այն որպես «մասնակի ընդհանրություն» (Kleiber, 2012), կամ «հայտնում են մեկ այլ ընդհանուր ճշմարտության գոյության մասին» (Palma, 2007, էջ 135):

Առաձների՝ համընդհանուր ճշմարտություն արտահայտելու և մասնակի ընդհանրություն դիտարկելու տարբերակման հարցում կարևոր է համատեքստի քննությունը (Kleiber, 2012): Մասնավորապես՝ եթե առաձն արտահայտում է մասնակի ընդհանրություն, ապա այն գործածվում է այն դեպքում, երբ հաղորդակցական համատեքստը ներակա իմաստային շրջանակում ենթադրում է հակառակ պատկերը: Օր.՝ *Il ne faut pas mélanger les torchons avec les serviettes (Թացը չորից պետք է ջոկել)* առաձի գործածումը հաղորդակցական իրադրությունում տրամաբանական է, եթե «թացն ու չորը խառնվել են»:

Առաձը կարևորագույն տեղ է զբաղեցնում նաև հաղորդակցման շրջանակում: Նախ՝ այն կարելի է դիտարկել որպես հաղորդակցման միջոց, որի շնորհիվ առաջ է գալիս ենթադրյալ նշանակությունը, այնուհետև՝ առաձն ինքնին կատարում է իմաստաստեղծ դեր: Մասնավորապես՝ միջմշակութային հաղորդակցության պարագայում այն կատարում է երկու էական գործառույթ: Մի կողմից՝ պահպանում է ժողովրդական ու մշակութային փորձն ու իմաստությունը, մյուս կողմից՝ դրանք փոխանցում ոչ միայն տվյալ մշակույթի կրողներին, այլև հաղորդակից դարձնում այլ հանրույթների (Зыкова, 2011, էջ 80): Ըստ Տամբայի փաստարկման տեսության դիտանկյունից բոլոր առաձներն ունեն փաստարկային ներուժ: Մասնավորապես՝ փոխաբերական բնույթի առաձների գործածությունը փաստարկում է համարվում այն առումով, որ բաղադրիչների ուղիղ իմաստի հանրագումարն ինքնին փաստարկ է ընդհանուր վերացական իմաստի համար: Այլ կերպ ասած՝ որևէ կոնկրետ համատեքստին առնչվող իմաստը (այն առկայանում է առանձին մասերի ուղիղ իմաստի տեքստով) թույլ է տալիս փոխաբերական հայեցակերպում այն վերագրել համատեքստերի լայն շրջանակի (Tamba, 2000, էջ 46): Այս երևույթը ստացել է «փաստարկային փոխաբերություն» լեզվաբանական բնորոշումը:

Որպես ամփոփում կարելի է նշել, որ առաձներն ու ասացվածքներն արդի լեզվաբանական գրականության մեջ դարձել են համակողմանի քննության առարկա: Մասնավորապես՝ հարկ է ընդգծել լեզվամշակութային ուսումնասիրությունների, ինչպես նաև ասույթի տեսության կարևորությունը: Փոխաբերությունը՝ որպես առաձների բնորոշիչ գիծ, իմաստային դաշտի կադապարի առանցքն է, որի շուրջ էլ ընդլայնվում է իմաստային շղթան՝ ներառելով համատեքստերի ընդգրկուն շրջանակ:

Ժամանակային եռաչափ կադապարում (անցյալ, ներկա, ապառնի) առաձներն ու ասացվածքները ուսումնասիրվում են հարաժամանակային հայեցակերպի համատեքստում: Ավելին՝ դրանք հատում են նաև պայմանականի առանցքը: Համընդհանուր-ազգային-մասնավոր համակարգում առաձներն ու ասացվածքները դիտարկվում են որպես համադրային միավորներ՝ նկատի առնելով մարդակենտրոն հայեցակերպի, ժողովրդական իմաստության ներամփոփման, ազգային լեզվամշակույթի, ինչպես նաև բուն համատեքստային կիրառման առանձնահատկությունները:

Գրականություն

- Բաղդասարյան, Հ. (2023). *Համընդհանուրի, ազգայինի և անհատականի հակադրամիասնությունը որպես թարգմանական խնդիր*: Երևան, ԵՊՀ հրատարակչություն:
- Зыкова, И. В. (2011). Фразеологические образы и их национальная обусловленность. *Вестник МГУ, Сер. 19, Лингвистика и межкультурная коммуникация*, № 2, 80-88.
- Пермяков, Г. Е. (1988). *Основы структурной паремииологии*. Москва, Наука.
- Anscombe, J.-C. (1994). Proverbes et formes proverbiales : valeur évidentielle et argumentative. *Langue française*, 102, 95-107
- Anscombe, J.-C. (2017). Le concept de figement sous l'angle de la parémiologie : vulgates et réalités. *L'information grammaticale*, 153, 44-52.
- Anscombe, J.-C. (2000). Parole proverbiale et structures métriques. *Langages*, 34^e année, 139 : La parole proverbiale, sous la direction de Jean-Claude Anscombe.
- Baghdasarián, H. (2021). Algunas consideraciones sobre la traducción al italiano de las paremias de la novela Rinconete y Cortadillo de Cervantes, *Paremia*, 31.
- Baghdasarián, H. (2014). Lo universal y lo nacional en las paremias desde una perspectiva interlingual, *Paremia*, 23.
- Ballard, M. (2009). Le proverbe : approche traductologique réaliste. *Traductologie, proverbes et figements* (éd. Michel Quitout & Julia Sevilla Muñoz). Paris, L'Harmattan.
- Bally, Ch. (1921). *Traité de stylistique française*. Seconde édition, Heildelberg.
- D'Andrea, G. (2017). Qui dit proverbe... dit rythme ? *Scolia Revue de linguistique*, 31: Le Proverbe, Forme, sens et rythme, coordonné par Sonia-Gomez Jordana Ferary.
- Greimas, A. J. (1960). Idiotismes, proverbes, dictons. *Cahiers de lexicologie*, vol. 2.

- Honeck, R. P. (1997). *A Proverb in Mind: The Cognitive Science of Proverbial Wit and Wisdom*.
- Kleiber, G. (2000). Sur le sens des proverbes. *Langages*, 34^e année, No 139; La parole proverbiale, sous la direction de Jean-Claude Anscombre.
- Kleiber, G. (2012). Sur le chemin des proverbes : questions de classification. *Voix et marqueurs du discours : des connecteurs à l'argument d'autorité*, éd. J.-C. Anscombre, A. Rodriguez Somolinos, S. Gomez-Jordana Ferary, Lyon, ENS éditions.
- Kleiber, G. (2017). La figure d'un proverbe n'est pas toujours celle d'une métaphore. *Scolia Revue de linguistique*, 31; Le Proverbe, Forme, sens et rythme, coordonné par Sonia-Gomez Jordana Ferary.
- Kleiber, G. (2019). L'espace sémantique commun des proverbes : essai de définition. *Studia Universitatis Moldaviae*, 4 (124), Seria "Stiinta Umanistica".
- Lakoff, G. & Turner, M. (1989). *More than Cool Reason: A Field Guide to Poetic Metaphor*. The University of Chicago Press.
- Michaux, C. (1999). Le proverbe : nom ou phrase?. II Congreso Internacional de Paremologia. *Paremia*, 8.
- Muñoz, J. S. (2000). Les proverbes et phrases proverbiales français, et leurs équivalences en espagnol. *Langages*, 34^e année, No 139; La parole proverbiale, sous la direction de Jean-Claude Anscombre.
- Palma, S. (2007). *Les éléments figés : Etude comparative français-espagnol*. Paris, L'Harmattan.
- Rodegem F.-M. (1984). La parole proverbiale. *Richesse du Proverbe*, François Suart et Claude Buridan (éd.), Vol. 2, Lille, Presses Universitaires de Lille.
- Schapira, C. (1999), *Les stéréotypes en français : proverbes et autres formules*. Paris, Éditions Ophrys.
- Tamba, I. (2000). Le sens métaphorique argumentatif des proverbes. *Cahiers de praxématique*, 35.
- Zouogbo, J. P. (2008), Traduire le proverbe : à la recherche de concordances parémiologiques en bété pour la constitution d'un corpus trilingue allemand/français/bété. *Meta*, 53(2).

Բառարանային աղբյուրներ

- Montreynaud, F., Pierron, A., Suzzoni, F. (1984). *Dictionnaire de proverbes et dictons*, Les usuels du Robert, Paris
- Nazarian, A. (1994). *Proverbes et dictons français avec leurs traductions et équivalents russes et arméniens*. Helios. Les trésors de la langue française.

Combet, L. et Muñoz, J. S. (1995). Proverbes, expressions proverbiales, sentences et lieux communs sentencieux de la langue française d'aujourd'hui, avec leur correspondance en espagnol, *Paremia*, 4.

Refranero Multilingüe <https://cvc.cervantes.es/lengua/refranero/> (մուսք՝ 10 սեպտեմբերի, 2024)

Dournon (1993). *Le dictionnaire des proverbes et dictons de France*, Hachette

<https://dictionnaire.lerobert.com> (մուսք՝ 24 փայիսի, 2024)

<https://www.larousse.fr> (մուսք՝ 24 փայիսի, 2024)

N. Shalunts – *The Problem of Defining Proverbs and Sayings in the Contemporary Linguistic Paradigm.* – The article attempts to outline the approaches and theories proposed by a number of scholars regarding proverbs and sayings as linguistic units. The role of metaphor is emphasized in differentiating between these two units. As a defining feature of proverb, metaphor leads to a general meaning with the help of cognition. Proverbs and sayings imply a panchronic manifestation, indicating past experiences, defining the present context, and expressing the future. These language units are viewed as a combination of the universal, the national and the individual as they express universal truth and linguocultural identity. From the perspective of contemporary linguistics, proverbs and sayings are studied at the level of utterance within the framework of discourse analysis.

Keywords: *proverb, saying, paremiology, universal truth, metaphor, utterance*

Н. Шалуц – *Проблема определения пословицы и поговорки в современной лингвистической парадигме.* – В статье представлены различные подходы к изучению пословиц и поговорок как языковых единиц. Подчеркивается роль метафоры в различении этих двух единиц. Метафора как определяющая черта пословицы ведёт к общему значению с помощью когниции. Пословицы и поговорки предполагают панхроническое проявление, указывая на прошлый опыт, определяя текущий контекст и выражая будущее. Упомянутые языковые единицы рассматриваются как сочетание универсального, национального и индивидуального, так как они выражают универсальную истину и лингвокультурную идентичность. Пословицы и поговорки изучаются в работе на уровне высказывания в контексте дискурса анализа.

Ключевые слова: *пословица, поговорка, паремиология, универсальная истина, метафора, высказывание*